



# BAKER TILLY ARMENIA

22 Hanrapetutyán Street  
Area 16, 5<sup>th</sup> floor  
0010 Yerevan Republic of Armenia  
Tel: +374(10) 544-301  
Tel: +374(10) 544-307  
Tel: +374(10) 544-309  
Fax: +374(10) 562-404  
Email: [info@bakertillyarmenia.com](mailto:info@bakertillyarmenia.com)  
[www.bakertillyarmenia.com](http://www.bakertillyarmenia.com)

07.04.2016թ.

N 011602

Հ Ա Ս Ս Ա Տ ՈՒ Մ Ե Մ

«Բեքտիլլի Արմենիա» ՓԲԸ  
Բիւրոյի տնօրէն

  
Պ. Կ. Կոզյան

Սուղիտորական ծառայությունների իրականացման  
լիցենզիա թիվ ԱԾ 054, տրված ՀՀ Ֆինանսների  
և էկոնոմիկայի նախարարության կողմից



## ԱՆԿԱՆ ԱՈՒԿՑՈՒԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

### «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մենք իրականացրել ենք «Նաիրի Ինշուրանս» վստահվագրական ՍՊԸ-ի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

#### *Ֆինանսական հաշվետվությունների և հաշվարկների համար տնօրինության պատասխանատվությունը*

Սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման (ՖՀՄՄ) համար պատասխանատու է տնօրինությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքում առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խաբեության կամ սխալի հետևանքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում «Նաիրի Ինչուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, «Նաիրի Ինչուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Նաիրի Ինչուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Աուդիտոր

Մ. Հայրապետյան

07.04.2016թ.

